Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլ ի հարցաշարերի պատասխաններ

9-րդ դասարան

1. Հայ գրականության ամենահարուստ ու հետաքրքրքական բաժիններից է բանահյուսությունը, որը ներառում է ժողովրդի պոետական մտածողության բոլոր սեռերն ու ժանրերը:Բանահյուսությունը սահմանափակումներ չունի ժամանակի առումով: Այսօր էլ հյուսվում են բազում երգեր ու պատմություններ, որոնք, ինչպես բոլոր ժամանակներում, պատմվում են իբրև խնդուկներ, պատմություններ:
Հայ գրականության հնագույն զրույցները մեզ են հասել Քերթողահոր շնորհիվ:Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է իրեն շրջապատող աշխարհի մասին, ժողովրդի՝ հավատալիքների, երազանքների մասին ունեցած պատկերացումների գեղարվեստական արտացոլումը: Հայ բանահյուության շքեղ էջերից է դիցաբանությունը՝ հին հեթանոսական աստվածներին ու հավատալիքներին նվիրված բազում առասպելաբանությունները: Հայոց դիցարանը մեզ է հասել Պատմահոր և մյուս պատմիչների գրի առած առասպելների միջոցով:Հայոց դիցարանը ավելի հին է, քան հունականը. հայ հեթանոս աստվածների ընտանիքի հայրը կամ գերագույն աստվածը Արամազդն է, որը համարվում էր ժամանակի որդին, երկնքի ու երկրի աստվածը, Համապատասխանում է հունական Զևսինյ, պարսկական Ահուրամազդային, հռոմեական Յուպիտերին, հնդկական Ինդիրային: Արամազդին կոչում էին իմաստուն, մեծն, հզոր, ամենազոր: Արամազդի տոնը կատարում էին Ամանորին, երբ տեղի էին ունենում նավասարդյան խանդավառ խաղեն ու մրցումները: նրան նվիրված բագինները գտնվում էին Բարձր Հայքի Դարաղանյաց գավառի Անի ամրոցում, Վասպուրականում և այլուր: Հայկական տոմարի 15-րդ օրը կոչվել է Արամազդի անունով: Արամազդի դուստրն էր ոսկեծղին Անահիտը՝ պտղաբերության, արգասավորության, մայրության աստվածուհին: Անահիտին անվանել են «սնուցող մայր»,«ոսկեմայր»,« ոսկեմատն»: Համապատասխանումէ հունական Արտեմիսին, հռոմեական Դիանային, պարսկական Անահիտային, եգիպտական Նիիթին և այլն: Նավասարդի սկզբին(օգոստոսի 15-ին) նշվում էր նշվում էր Անահիտին նվիրված գլխավոր տոնը՝ կապված բերքի հասունացման հետ: Հետագայում այն վերածվում է Մարիամ Աստվածածնի պաշտամունքի: Անահիտի ոսկեձույլ արձանը գտնվում էր Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Երիզա ավանում. այն կործանեց հռոմեացի զորավար Մարկոս Անտոնիոսը: Հայոց տոմարի 19-րդ օրը կոչվում է Անահիտի անունով: Արամազդի դուստրն էր սիրո և գեղեցկության աստվածուհի Աստղիկը՝ Վահագն աստծո հարսնացուն. համապատասխանում է հունական Աֆրոդիտեին: Աստղիկին նվիրված մեհյանները գտնվում էին Աշտիշատում, Արտաշատում,Արտամետում և այլուր: Աստղիկին նվիրված տոը կոչվում էր Վարդավառ, մարդիկ իրար ցողոմ ին ջրով և զարդարում կարմիր վարդերով: Աստղիկի անվան հետ է կապվում հայկական տոմարի 7-րդ

օրը։Հայոց դիցարանի սիրված աստվածուհիներից է Նանեն՝իմաստության աստվածուհին ու ընտանիքի հովանավորը։ Լույսի, մաքրության, բարության և ճշմարտության աստվածն է Միհրը, որը պատկերվել է խիզախ պատանու տեսքով՝ հայկական խույրով և հսկա ցուլին տապալելիս։ Միհրի վիպական մարմնավորումներին մենք հանդիպում ենք «Սասնա ծռեր» էպոսում։Ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն է Վահագնը, որը մարմնավորում է բնության չորս տարրերը՝ օդը, հուրը, ջուրը, հողը։ Սա մեզ հասած միակ առասպելն է։ Համապատասխանում է հունական Արեսին։Վահագնի անունով է կոչվում յուրաքանչյուր ամսվա 21 –րդ օրը։ Այսօր էլ մարտի 21-ին՝ գարնանայինն գիշերահավասարին օրը, Գառնիի հեթանոս տաճարու նշվում է Վահագնի տոնը, զոհաբերվում է պիսակավոր ցուլ, վառվում է հեթանոս խարույկը, և մեր հավատավոր ժողովուրդը հավատում է ռազմի աստծո հայտնվելուն և իր հաղթանակին։Հեթանոս հայերն ունեցել են գիտության և դպրության առանձին աստված՝ Տիրը՝ Արամազդի դպիրը, որը համապատասխանում է հունական Հերմեսին՝ Զևսի պատգամաբերին։ **Նամակի նմուշ՝** Խորին խոնարհում Մեծդ աստծուն, որ մշտապես հոգում ես ժողովրդիդ կրթության ու դպրության մասին։ Մեծդ Տիր, քեզ գրում է քո ժամանակներից հազարամյակներ հետո ապրող աշակերտդ. ես ուզում եմ զրուցել քեզ հետ անկեղծ ու շիտակ։ Գիտեմ, որ դու չգիտես այսօրվա իմ դպրոցի ու իմ մասին։ Հիմա մենք կարող ենք մի քանի րոպեում իմանալս աշխարհում կատարվող իրադարձությունները, մասնակից լինել կրթության առաջընթացին, գրել ու կարդալ մի այբուբենով, որ քեզնից դարեր հետո է ստեղծվել։ Ես ուզում եմ քեզ հանդիպել իմ երազում, լսել քո աստվածային պատգամները, իմանալ քո խորհրդավոր ժամանակի մասին, ներկա լինել քո զրույցներին ստանալ քո աստվածային օրհնություն, ունկնդիր լինել հեռավոր ժամանակների զանգերի ղողանջին….

2. Օշականի սուրբ ննջեցյալի կերպարը մեզ է հառնում 1600-ամյա ժամանակի հեռվից, դարերի խորքից մեզ է հասնում նրա փրկարար ձայնը. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»։
Հայերենի առաջին ուսուցիչը իրավացիորեն սրբացվել է դեռևս իր կենդանության օրոք։ Նրա կերպարին առաջինն անդրադարձել է երախտապարտ աշակերտ Կորյունը, որը հայոց վեհափառ հայրապետի տեղապահ Հովսեփ Վայոցձորեցու պատվերով շարադրում է իր Ուսուցչի կենսագրությունը՝«Վարք Մաշտոցի» մատյանը,ըստ էության ստեղծելով հայ ժողովրդի երթի առաջնորդ- խորհրդանշանը, որը փորձությունների երկար ճանապարհին մնաց որպես հայրենիքի փրկության միակ ապավեն։ Կորյունի մատյանից մենք ստույգ տեղեկություններ ենք քաղում Մաշտոցի կյանքի և գործունեության մասին։ Մաշտոցը ծագումով եղել ազնվական. վարկած կա, որ նա եղել է Գրիգոր Լուսավորչի տոհմից։ Նա տիրապետել է ժամանակի գրագրության համար անհրաժեշտ լեզուներին՝ հունարեն, պարսկերեն, ասորերեն։ Սովորել է Ներես Մեծ վեհափառի մոտ,իսկ նրա մահից հետո ծառայության է մտել Արշակունիների պալատում՝ Խոսրով Գ թագավորի մոտ։ Կորյունը վկայում է, որ «Նա

տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել զորականներին»։ Ուրեմն՝ նաև զինվորական է եղել,հետո անցել է ճգնակեցության՝«միայնակեցական կարգի մեջ է մտնում»։«Տրտում հոգսերով պաշարված ու թակարդված՝ մտածմունքների ծովն էր ընկած, թե ինչպիսի ելք գտնի եղբայրների և ազգակիցների համար», քանի որ վերջնականապես վճռել էր ելք գտնել «հոգալ համայն (հայոց) աշխարհի ժողովրդի» փրկության գործը։ Նա անցնում է Ասորիք՝ Եդեսիա և Ամիդ քաղաքներ, և «ապավինելով աղոթքի, հայոց նշանագրերը տեսնում է հուգու աչքերով, տեսիլքի մեջ և աղոթքից վեր կենալով՝ ստեղծում մեր նշանագրերը»(Մովսես Խորենացի)։ Հայոց երկաթագիր գրերով ծանրաբեռ՝ նա գալիս է Այրարատ գավառի Նոր Քաղաք՝ Վաղարշապատ, որտեղ նրան դիմավորում են հայոց արքան, վեհաթառը, նախարարները, եպիսկոպոսները, ողջ հայ ժողովուրդը, և սկսվում է կրթական գործի սրբազան քարոզչությունն ու ուսուցումը։ Հայոց լեզուն հայերեն քարոզչությամբ մտնում է ժողովրդի մեջ՝ դուրս մղելով օտար ու անհասկանալի հունարենն ու ասորերենը։ Նա դառնում է երկրորդ Լուսավորիչ։ Թարգմանվում է Աստվածաշունչը։ Մաշտոցը գրում է շարականներ ու ճառեր՝ իրավացիորեն դառնալով առաջին շարականագիրը՝Սահակ Պարթևի հետ միասին։ Մաշտոցի մարդկային կերպարը Խորենացին պատկերել է իր նշանավոր «Ողբ»-ում՝«Ո՞ւր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը՝ շեղվածների համար, ո՞ւր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւ է այն բարյացակամ սիրտը, որ հետևողներ էր գրավում, ո՞ւր է երկայն ճանապարհները հեշտացնող հույսը, նեղություններից հանգստացնողը..»։Փարպեցին իր «Հայոց պատմության» մեջ անդրադառնում է «Մաշտոց անունով արդար մարդու» կյանքինհիշատակելով« երանելի Մաշտոցի սիրելի աշակերտ Կորյունի գիրքը»։ Պատմում է Դանիելյան նշանագրերի մասին, որոնք «իրենց մուրացածո գծագրությամբ բավական չեն հայերեն բոլոր վանկերը հնչյունաբանական ամբողջ ճշգրտությամբ փոփոխելու համար»։ Այնուհետև ներկայացնում է Մաշտոցի տեսիլքն ու գրերի գյուտը՝«Եվ տեսավ,- որ այն է երազ քնի մեջ, ոչ տեսիլք էր արթմնի,- այլ սրտի խորքերում երևութացյալ հոգին աջ ձեռքի թաթով գրում էր ժայռի վրա»։ Բոլոր հեղինակների մատյաններից հառնում է աստվածային շնորհով օժտված Փրկչի կերպարը, որը դարձավ հայ ժողովրդի ուղեցույց աստղը, մեր«ազնվության վկայականը», մեր հավերժող կենսագրությունը։

3. Ոսկեդարի պատմիչների շքեղ փաղանգում իր ուրույն տեղն է զբաղեցնում Ավարայրի երգիչը(Պլպուլն Ավարայրի- Ղևոնդ Ալիշան)։ Ի տարբերություն Ագաթանգեղոսի, Բուզադի, Փարպեցու և Քերթողահոր, Եղիշեն իր մատյանը՝«Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», շարադրել է ականատեսի վկայությամբ։ Մատյաը Եղիշեն գրել է Մամիկոնյան Դավիթ երեցի պատվերով։ Մեզ հայտնի չէ, թե ով է Դավիթ երեցը, բայց ակնհայտ է, ու նա Մամիկոնյան տան երևելիներից է, քանի որ Եղիշեն իրեն շատ համեստ հնարավորությունների տեր է ներկայացնում երեցի համեմատությամբ։ Որ մատյանը գրվել է մասնակցի ու ականատեսի վկայությամբ

հավաստում է հենց ինքը Եղիշեն: Նա գրում է.«Ահա մեր կամքի հակառակ արտասվալից ողբով շարադրում ենք այն բազմաթիվ հարվածները, որոնց մեջ հենց մենք էլ ընկանք՝ ականատես լինելով»:Այնուհետև շարունակում է.«Ո՛չ կարծիքներով եմ վեր թռել և ո՛չ էլ լուրերից արթնացել, այլ ե՛ս ինքս նույն տեղում պատահեցի և տեսա ու լսեցի հանդգնաբար խոսելու ձայնը…»: «Ինչպես որ այս ժամանակ մեր աչքերով տեսանք, որովհետև Հայոց աշխարհն էլ նույն նահատակությամբ նահատակվեց»: Իր ոգեշունչ մատյանում պատմիչը գեղարվեստական պատկերավոր լեզվով ներկայացնում է ընդամենը մեկ օր տևած հերոսամարտը՝ այն ամփոփելով մի շարք խրատական, փիլիսոփայական, հայրենասիրական սեղմ ասույթներում և թևավոր խոսքերում: Ահա դրանցից մի քանիսը.

Ամեն մարդ ինքն իր մեջ եկեղեցի էր:
Յուրաքանչյուր մարմին սուրբ սեղան էր:
Ինչպես որ հնում մեկն ասել է՝ Մահ չիմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն:
Լավ է աչքով կույր լինել, քան մտքով կույր:
Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից:
Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է:
Վախը թերահավատության նշան է:
Եղիշեն հրաշալի պատմող ու նկարագրող է, ուստի զարմանալի չէ ընթերցողի հիացումը այս մատյանով:

4. 1902 թվականի աշունը չափազանց արգասաբեր եղավ մեծ լոռեցու համար: Թումանյանը հանգստանում էր Աբասթումանում: Հենց այդ փառահեղ աշնանն էլ նա մշակեց իր պոեմները և գրեց «Սասունցի Դավիթ» պոեմը: Բանաստեղծն այն գրել է փոքր տարիքի երեխաների համար՝ կամեհալով նրանց դաստիարակել հայրենասիրությամբ, ազատասիրությամբ, խաղաղասիրությամբ, մեծահոգությամբ, երախտագիտությամբ, գթասրտությամբ: Բայց պոեմը իր գեղարվեստական մշակմամբ սիրելի է նաև մեծերին, քանի որ գրական մշակումների մեջ այն առանձնանում է իր անզուգական բարձրարժեքությամբ, գեղարվեստական պատկերավորման միջոցների շռայլ օգտագործմամբ, ժողովրդական լեզվի վարպետ օգտագործմամբ: Թումանյանը այն գրել է՝ օգտվելով Գարեգին Սրվանձտյանի, Մանուկ Աբեղյանի, Գարեգին Հովսեփյանի, Բագրատ Խալաթյանցի և այլոց՝ հրապարակի վրա եղած տպագրություններից «1874-1893թթ.»:

Մելիք

Սարսափ կալավ դն Մելիքին, Մահվան դողը ընկավ սիրտը. Ու տապ արավ գոռոզ հոգին
Էլ չեմ նստի ես քո հացին…..Դու տմարդի, վախկոտ ու նենգ ……
Երեք հազար լիդր էր կշռում հսկայական իր մնունդը…..Գուժեց գոռոզ Մըսրա արքան……

Դավիթ

Էնպես զարկեց ջաղացքարին՝ քարը ելավ հազար կտոր….
Մըռընչալով ելավ տեղից էն առյուծի առյուծ որդին
Իր ձին հեծավ ու փոթորկեց, խաղաց, շողաց Թուր-Կեծակին
Թըռավ, ցոլաց Դավթի հուր ձին ու ցած իջավ Թուր-Կեծակին
Դուք ըռանչպար, խաղաղ մարդիկ……հազար ու մի հոգսեր ունեք
Ի՞նչ եք առել նետ ու աղեղ, եկել թափել օտար դաշտեր
Ձանձրացե՞լ եք խաղաղ ու հաշտ հողագործի օր ու կյանքից.
Դարձեք եկած ճանապարհով….բայց թե մին էլ զենք ու զոռով վեր եք կացել դուք մեզ վրա
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր, Սասնա Դավիթ, Թուր –Կեծակին։
Դավթի հետ համեմատվում են Աղասին, Խենթը, Թաթուլ իշխանը, ֆիդայիները, ազգային-ազատագրական պայքարի բոլոր նվիրյալները։

Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի գնահատման չափանիշներ

9-րդ դասարան

1-ին հարցի ենթահարցեր՝ 1 - 3 մ., 2 - 2 մ.
2-րդ հարցի ենթահարցեր՝ 1 - 3 մ., 2 - 2 մ.
3-րդ հարցի ենթահարցեր՝ 1 - 3 մ., 2 - 2 մ.
4-րդ հարցի ենթահարցեր՝ 1 - 3 մ., 2 - 2 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան